Սցենար 2. Քլեր. Արդյո՞ք իմ ջանքերը բավարար են Տիրոջ խնդրանքը կատարելու համար (Հովհաննես 6.5-14)

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Երբ Հիսուսը և Իր աշակերտները տեսան մոտեցող բազմությունը, աշակերտները վախեցան, որ իրենք բավարար ուտելիք չունեն նրանց կերակրելու համար:

Հովհաննես 6.5-14 հատվածներում ուսումնասիրեք Հիսուսի կողմից 5000 մարդու կերակրելու պատմությունը, փնտրելով և նշելով հետևյալ սկզբունքի վկայությունը. **Երբ մենք Փրկչին առաջարկում ենք մեր ողջ ունեցածը, Նա կարող է բազմապատկել մեր ջանքերը, որպեսզի մենք կարողանանք իրականացնել Իր կողմից դրված նպատակները**:

- Ի՞նչ եք գտել այս հատվածներում, որն ապացուցում է այս սկզբունքը:
- Ձեր կարծիքով, աշակերտներն ու երիտասարդ տղան ի՞նչ էին զգում, տեսնելով, թե իրենք ինչ ունեին այն բանի համեմատ, ինչ իրենց հարկավոր էր:

Կարող եք դիտարկել Երիտասարդ կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական քույր Միշել Դ. Քրեյգի հետևյալ խոսքերը.

Երբևէ ունեցե՞լ եք այնպիսի զգացում, որ ձեր տաղանդներն ու պարգևները շատ քիչ են՝ ստացած հանձնարարությունը կատարելու համար: Ես ունեցել եմ: Բայց ես և դուք կարող ենք տալ Քրիստոսին այն, ինչ ունենք, և Նա կբազմապատկի մեր ջանքերը: Այն, ինչ դուք կարող եք տալ, ավելի քան բավարար է, նույնիսկ ձեր մարդկային գործոնով և թույլ կողմերով հանդերձ, *եթե* ապավինեք Աստծո շնորհին (Միշել Դ. Քրեյգ, «Սուրբ դժգոհություն», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2018, 54):

- Ինչպե՞ս կարող ենք տարբեր եղանակներով «Քրիստոսին տալ այն, ինչ ունենք»:
- Ի՞նչ սովորեցիք այս պատմությունից, որը կարող է օգնել մեկին, ով անհանգստանում է, որ իր տվածը գուցե բավարար չլինի:

Երբ պատրաստվեք կիսվել ձեր սովորածով, հիշեք ձեր կամ ուրիշների կյանքից մի օրինակ, երբ տեսել եք, թե Փրկիչն ինչպես է բազմապատկում ինչ-որ մեկի ջանքերը՝ Իր գործը կատարելու համար:

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Scenario 2: Claire*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.